**Երախտիքի խոսքեր փաստաբաններին**

26.09.2011 07:43

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շահումյանի շրջանի վարչակազմի աշխատակազմի կրթության բաժնի վարիչ Խ. Վարդանյանը իր և բաժնի անունից երախտագիտության և հարգանքի խոսքն է հղել ՀՀ փաստաբանների պալատի նախագահին և փաստաբաններ **Ադելինա Հակոբյանին, Կարեն Թումանյանին, Էդմոն Մարուքյանին, Անահիտ Ալոյանին, Ռուբեն Հակոբյանին, Արծրուն Մաղաքյանին, Վահան Ավագյանին, Կարինե Գասպարյանին, Լարիսա Դոխոյանին** և **Արայիկ Պապիկյանին**՝ իրենց կատարած մարդասիրական գործունեության համար:

Գրության մեջ մասնավորապես ասվում է.

*«Սեպտեմբերի 1-ի՝ գիտելիքի օրվա առթիվ, Շահումյանի շրջանի մի շարք դպրոցների աշակերտներին նրանց նվիրած գրենական պիտույքները, պայուսակները և այլ պարագաները, անշուշտ, մեծ ոգևորություն պարգևեցին բոլորիս:*

*Ազատագրված տարածքների դպրոցականներին անհրաժեշտ պարագաներով ապահովելը ևս հայրենասիրություն է ու մեծ օժանդակություն՝ դասընթացն արդյունավետ կազմակերպելու, երեխաներին հայեցի դաստիարակելու, հայրենիքին անվախ ու հայրենասեր քաջազուններ պարգևելու գործում:*

*Երախտապարտ ենք, որ Ձեր ղեկավարած կառույցում աշխատում են նման բարեհոգի մարդիկ և հուսով ենք, որ նմանատիպ մարդասիրական ձեռնարկումները շարունակական բնույթ կկրեն և հաճախակի կկազմակերպվեն, քանզի հայ ազգն ունի նման ազգասեր անհատներ:*

*Միշտ եղեք առողջ և ապավեն ու նեցուկ հայ ազգին»:*

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })